

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՄԱՐԱՆԻ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ

Ուշագիշտ ընթերցողներն, անտարակոյս, առանձին հետաքրքրութեամբ կարդացած կը լինեն Հնչակի վերջին երեք համարում չարունակարար գետեղված "Թիւրք կառավարութիւնը և հայկական շարժումը" խորագրով գրուածքը: Նրանց առանձին ուշադրութեանը պէտք է արժանացած լինեն այդ գրուածքի երկրորդ ու վերջին մասերը: Այդ գրուածքում մատնանիշ կան արված այնպիսի փաստեր, իրողութիւններ, որոնք չը պիտի վրիպեն հայ յեղափոխականի աչքից, քանի որ նրանք նպաստում են մէկ էական կարեւորութիւն ունեցող խնդրի լուսաբանութեան:

Մեր խօսքն այն փաստերի, այն իրողութիւնների վրայ է, որ ցոյց են տալիս հայ ու տաճիկ ժողովրդներին մէջ ոչ սակաւ անգամ տեղի ունեցած համերաշխ ու միահամուռ բողոքներն իրենց կառավարութեան դէմ:

Դժբաղդարար, մեր հայրենասէրների, ազգասէրների մէջ այնքան խորունկ արմատներ են թողած թշաւմական ոգին դէպի տաճիկն ընդհանրապէս և աղգաշին նախապաշարմունքները, որ նրանք սկէպտիսական և կամ սառն կերպով կը վերաբերվեն դէպի վերայիւած տաճիկահայ համերաշխութիւնը: Ինչ ենք ասում. ներանց մինչև իսկ ցանկալի չի լինիլ նրանք հակառակ իսկ կը լինեն այդ համերաշխ գործակցութեան, որ նրանց՝ հանդերձ՝ անբնական կը թվայ: Իրենց հայրենասիրական, ազգասիրական նեղ խցին ճնշում է նրանց խելքն ու սիրտը, որպէս զի նրանք կարողանան մի րօպէ անաշուտ կերպով դիտել իրականութիւնը և բըննել նրա երևոյթները:

Բոլոր ցաւը նրանումն է, որ մեր հայրենասէրները, ազգասէրները իրենց հայրենասիրութեամբ, իրենց ազգասիրութեամբ հասել են մինչ այն աստիճան կուրութեան, որ, առհասարակ, ատում են տաճիկն, որովհետև նա տաճիկ է, ատում են քիւրդին, որովհետև նա

քիւրդ է, ատում են ռուսին, որովհետև նա ռուս է: Նրանք չեն նայում՝ տաճիկի, քիւրդի, ռուսի վրայ իրրի մարդու վրայ, այլ իբրև տաճիկի, իրրի քիւրդի, իրրի ռուսի: Արդեօք դա չէ՞ նմանում այն բանին, որ մահմետականը քրիստոնեային գետավոր է կոչում, նրան իրենից աւելի ստոր համարելով: Մեր հայրենասէրները, մեր ազգասէրները, որ գետավոր խօսքի համար այնքան առատ զայրոյթով գիտեն յարձակվել տաճիկի վրայ, ինչպէ՞ մի րօպէ անգամ չեն մտածում, թէ իսկապէս իրենք էլ նոյնանման վերաբերութիւն ունեն դէպի տաճիկը, իրենք, որ այնքան սովոր են պարծենալ իրենց՝ տաճիկից աւելի ունեցած՝ քաղաքակրթութեամբ:

Իրաւ է, որ մեր հայրենասէրների, մեր ազգասէրների ընդհանրապէս դէպի տաճիկն ունեցած ատելութեան աղբիւրն այն է, որ նա հային տիրող աղգ է, որ դաւրերից ի վեր հայը տաճիկ բռնակալութիւնից կրել է ստրկական ամեն տեսակ շարշարանք ու թշուառութիւն: Բայց ժամանակ է ուշիմ ու բանիմաց կերպով նայելու իրականութեան վրայ: Երբեք չը պիտի չիտ թել տաճիկ բռնակալ կառավարութիւնը տաճիկ թշուառ ու ստրուկ աշխատաւոր ժողովրդի հետ: Ում յայտնի չէ, թէ որչափ աղքատ, որչափ կեղծքոված, որչափ հարստահարված է նոյն այդ տաճիկ աշխատաւոր ժողովուրդն իր սեփական կառավարութեան ձեռքով: Հազիւ թէ հայ աշխատաւոր ժողովուրդը յանդգնէ նախանձել նրա վիճակին: Բայց թերևս ասեն մեզ, թէ կարող է հայը նախանձել աշխատաւոր տաճիկի վիճակին այն տեսակետից, որ տաճիկը մի քանի տուրքեր հայից փոքր ինչ պակաս է տալիս, որ դատարանում վկայ լինելու իրաւունք ունի, որ կրօնական անհամբերողութեան ենթակայ չէ, որ զէնք կրելու իրաւունք ունի. մի խօսքով, որ տաճիկն ունի, ինչպէս սովորաբար ասում են, մի քանի առանձնաշնորհումներ: Հումնեւր Բայց արդեօք այդ, այսպէս ասած, առանձնաշնորհումները տաճիկ աշխատաւոր ժողովրդին պակաս աղքատ, պակաս հարստահարված, պակաս ստրուկ են ներկայացնում: Միթէ՞ մենք այս րօպէիւ

ականատես չենք տաճիկ աշխատաւոր ժողովրդի տընտեսական աւերման, որ նրան տանում է գէպի մահա-ցումն: Միթէ՞ այս բազէիս մենք ականատես չենք տաճիկ ժողովրդի քաղաքական կառնարեալ ստրկութեան, որ հայոց քաղաքական գրութիւնից ո՛չ մի կերպ տարբեր չէ՝ Այդ տնտեսական աւերումն ու քաղաքական քաղաքականութիւնն այլանդակում, հրէշաւոր է գործնում և կամ խալաթ թունաւորում, խեղդում, մահացնում է տաճիկ աշխատաւոր ժողովրդի թէ՛ հանրական և թէ՛ անհատական կեանքի բոլոր արտայայտութիւնները: Այլանդակում, հրէշաւոր է գործնում այն տեսակէ, աից, որ նրա մէջ զարգացնում է ընչաքաղցութիւն, օտարակերութիւն, գաղանաւարաց յատկութիւններ, և թունաւորում, խեղդում, մահացնում է այն տեսակէտից, որ նրան կատարելապէս զուրկ է պահում մարդկային զարգացման ամեն տեսակ ձգտումներից, տնային մի շան չափ ընտելացնելով նրան բռնակալութեան:

Չը կան բնականից ընչաքաղց, օտարակեր գաղանաւարաց ու վնասաբեր ժողովուրդներ, որպէս չը կան բնականից ինքնուրաց, առաքինի, բաժն օգտակար ժողովուրդներ: Մի և նոյն ժողովուրդը զանազան ժամանակներ, իր զարգացման զանազան շրջաններում կարող է ունենալ թէ՛ մի և թէ՛ միւս տիպարը: Թէ՛ մի և թէ՛ միւս տիպարը նա ստանում է իր տնտեսական, հասարակական գրութեան կերպերի համաձայն: Որքան հանրակեցութեան ստրկական կերպերն ընդունակ են մի ժողովրդին տալու առաջին կերպարանքը, տիպարը, նոյնքան հանրակեցութեան ազատ կերպերը կը տան նրան երկրորդ կերպարանքը: Փաստ է, թէ որչափ տխուր յատկութիւններ ունեն հայերն ընդհանրապէս՝ շնորհով իրենց ստրկական գրութեան: Փաստ է նոյնպէս, որ կան իրենց ստրկական գրութեան շնորհով՝ մահմետականութիւն ընդունած ու իրենց լեզուն կորցրած հայեր, որոնք իրենց բարք ու վարքով այսօր գրեթէ ամենևին չեն տարբերվում տաճիկ կամ մահմետական մէկ այլ ցեղից:

Բայց բոլոր ժողովուրդներն անասելի եստմունքներ են: Նրանք հոսեցնում են ուրիշի արիւնք, իրենց սեփական արիւնք միշտ զօրացնելու համար սեփական տիրապետութիւնը, լինելու համար սեփական շտեմարանները, տարածելու համար սեփական ազդեցութիւնը: Սակայն մարդկային հանրակեցութեան տնտեսական, հասարակական կերպերը գնալով զարգանում են, ժողովուրդների կեանքի պայմանները փոփոխութեան օրհանջ են գտնում և առաջանում են այնպիսի հանգամանքներ, որ ժողովուրդներէ մէջ շահերը սկսում են աւելի ու աւելի միակերպվել և նրանց հակառակու-

թեանը, նրանց թշնամութեանը տեղի չէ մնում: Իսկ այդ շահերն առաջնապէս ժողովուրդների տնտեսական շահերն են, որոնց լուծման համար բնական կերպով նրանք, ժողովուրդները, յարոնվում են մի և նոյն սոսկարէզի վրայ՝ յանուն իրենց ընդհանուր շահերի:

Այսօր տաճիկ ու հայ աշխատաւոր ժողովուրդների տնտեսական շահերը համապատասխան են: Կա ազա-ցուցանելու համար բաւական է մատնանիլ անել այն փաստը, որ այն պարագաներում, երբ այդ ժողովուրդներն ըմբռնում են իրենց շահերի համապատասխանութիւնը այս կամ այն տնտեսական պահանջի նկատմամբ, նրանք միանում են իրենց ընդհանուր բողոքով կառավարութեան դէմ: Եթէ այդպիսի դէպքեր այնքան ստեղծ չեն պատահում, դա բացատրվում է նրանով, որ այդ ժողովուրդներն ըմբռնած չեն իրենց տնտեսական ընդհանուր շահերը: Ճիշդ է, թէ Վուրանի ճակատագրական վարդապետութիւնը, որ տաճիկ ժողովրդի կրօնական մոլեռանդութեան աղբիւրն է և որ ունեցել է նրա կեանքի վրայ ճակատագրական ազդեցութիւն, տաճիկի դէպի հայը կրած հակակրակական ոգու մէջ ունի իր մեծ բաժինը: Բայց չը պիտի անտես առնել այն հանգամանքը, որ եթէ կրօնը խոստանում է երջանկութիւն միւս կեանքում, այդուհանդերձ դա չէ խանգարում, որ այս կեանքում տաճիկ աշխատաւոր ժողովուրդն զգայ իր տնտեսական անկամ վիճակը, իր ապրատու-թիւնը, իր թշուառութիւնը: "Սոխակին երգելով չեն կերակրում": Տնտեսական այրող խնդիրների, հացի խնդրի ժամանակ ամենամոլեռանդ ժողովրդի համար կրօնը դառնում է երկրորդական: Հէնց որ տեղի է ունենում մի տնտեսական խիստ պահանջ, նոյն այդ մոլեռանդ տաճիկը մոռանում է իր կրօնը և ձեռք է մեկնում գեաւուրին, եթէ տեսնում է որ սրա պահանջը մի և նոյնն է, ինչ որ իրենք:

Փաստերը մեր ձեռքի տակ են: Աշխատաւոր ժողովուրդները միմեանց մոլեռանդաբար ատել չը գիտեն: Նրանք գաւակներ ու մշակողներ են մի և նոյն հողի, կամ ընկերներ մի և նոյն գործարանում և նրանք կեղեքվում, հարստահարվում ու ճնշվում են մի և նոյն ձեռքով ու միջոցներով:

Եզրակացնում ենք մեր խօսքը նրանով, թէ տաճիկահայատակ այլ և այլ օտար ժողովուրդների, հայ, յոյն, ասորի, եզիդի և այլն, որպէս և տաճիկ ժողովրդի համերաշխ գործակցութիւնն անհրաժեշտ է յեղափոխութեան նպատակադարմար աջողութեան համար: Այդ համերաշխ գործակցութիւնը կարող է կայանալ այդ ժողովուրդների տնտեսական ընդհանուր շահերի հիման վրայ և այդ համերաշխ գործակցու-

թիւեր պէտք է ուղղել այդ ժողովուրդների ընդհանուր թշնամու՝ տաճիկ բռնակալութեան դէմ:

Չը պիտի կուրանալ հայրենասիրական ազգային հասկանութեամբ, որ միշտ ընդունակ է մղելու հայրենասէրներին դէպի անխրաւացի ու աննպատակաւարժար, եթէ ոչ ուղղակի վնասակար, մի գործունէութեան: Տաճիկական բռնակալութեան լուծը կրող ժողովուրդների համերաշխ յեղափոխական գործակցութիւնը անհրաժեշտ է յեղափոխութեան աջող ելքի համար և հայրենասիրական կոյր ատելութիւնն առհասարակ դէպի օտարը՝ պէտք է տեղի տայ նպատակաշարժար ու յուսամիտ գաղափարներին ու ձգտումներին: Բեղափոխական առաջնորդողը պէտք է զարգացած մարդ լինի. իսկ զարգացած մարդու դէպի իր հայրենիքն ունեցած սիրոյ շափը չէ կարող զգալ օտարն ունեցած ատելութիւնը լինել: Զարգացած մարդը չէ կարող կուրորէն, անհաշիւ ու ետական կերպով սիրել իր հայրենիքը, առարկելով թէ դա իր նախնիքների հարադատ վայրն է, նրանց հողն է, նրանց ցիւց իրեն մնացած ժառանգութիւնն է: Զարգացած մարդը կարող է սիրել իր հայրենիքը իր սովորութիւնների ու կապերի շնորհիւ, իր խելքի գատողութեամբ, իր սրտի թեւադրութեամբ և այդպէս սիրելով նա կը գիտենայ նպատակաշարժար կերպով գործել և մեռնել նրա համար, բայց ունենալ մեր հայրենասէրների ազգային հասկանութիւնը՝ երբէք չէ կարող:

Ուրեմն, թող հայ յեղափոխական առաջնորդող մարմինները, յանուն յեղափոխութեան աջողութեան, փորձեն լրացնել իրենց նպատականշանութիւնը և աշխատեն կարելիին չափ իրականացնել տաճիկ բռնակալութեան տակ հեծող ժողովուրդների յեղափոխական համերաշխ գործակցութիւնը:

ՏՆԴԵԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԵՒՍՏԻՈՅ ՆԱՀԱՆԳԻՒՆ:

Տնտեսական և հասարակական վիճակ
Հայոց:

Տնտեսագրոյս նախորդ համարումը երբ ի վեր հանեցինք գաւառիս ազգաբանութեանց, և մասնաւորապէս տիրող թուրք ժողովրդեան բնասութիւնն և քաղաքական կազմութիւնը, այդու ճաշակ մը տուած եղանք նաև գաւառիս հայոց նիւթական և տնտեսական վիճակի մասին: Ներկայ համարով կուգամ դարձեալ անդրադառնալ յայդ կարևոր կէտ:

Երբ շարք մը դարերու ընթացքի մէջ ծանօթ հանգամանքներու բարբարոսական արշաւանքներու, արածու

թեանց, առեւտրական և աւարտական շահատակութիւններու, ներքին երկպառակութեանց, և իլլումն ա մենի՝ կրօնի սևազգեստ պաշտօնեայնիքու մոլեռանդ և խամրեցուցիչ ներշնչումներու հետեանք — մեր ազգը կորուսեր է ու խորտակեալ իւր քաղաքական գեղը, երբ մի կողմէ ընդթարմացեր ու բթաչել է իւր մէջ, եթէ ոչ մեռեր, ազատականութեան և ինքնապաշտպանութեան ձգտումներն ու ոգին, մի րան իւր սրտի մէջ վառ ու կենդանի մնացեր է, մի բան միայն իւր թարմութիւնն պաշէր է. — աշխատասիրութիւն և յատաջողիմականութիւն: Հայն զրկուած խել մի քաղաքական և հասարակական իրաւասութիւններէ և պայմաններէ, թռակալեր պաշտօններէ, եկամտից և ոռճիկներու ստատ աղբիւններէ, կալուածներէ ու ստացումներէ, միւս կողմէ թուրքին յետադիմութիւնն և անընդունակութիւնը, չարժանիք եղած են իրեն զօրավիգ ընտրած գաւառիս մէջ երկրագործութիւնն, արհեստք և վաճառականութիւնը: Ըստ մեծի մասին հայոց ձեռքն են, թէ և մի քանի արհեստաւորական գաւառագրերու մէջ տաճիկ խիստ ցանցառ կերպով կը տեսնուին, իսկ երկրագործութեան մէջ տաճիկ զիւղացիք ալ մի կարևոր տեղ կը բռնեն:

Չը նայելով երկրին այլ և այլ տխուր հանգամանքներին և զայն չընտելուող բռնապետական մահաթոյր մթնոլորտին, ձեռակերտութիւնք քաղաքիս մէջ խիստ յառաջ գնացած են և անհամեմատ կերպիւ ծաղկած, երբ մասնաւոր այդ բարգաւաճումը նկատեմք որ մտաւորական են, այնպէս որ մեր արհեստաւորաց ինչ-ինչ շինածներէ ապէս անմշակ և անտաշ ժողովրդեան ձեռաց արգասիք՝ կրնան մրցել երբեմն իրենց տիպարն եւրոպականոյն հետ: Մասնաւոր վերջին տարիներս տեսիլ զարկ ու մը զումն տրուած է ձեռակերտութեանց: Իսկ երկրագործութիւնը որ կլիմային բերմամբ կը կայանայ միմիայն ցորենի մշակութեան մէջ և որքան նահապետական կեդին մերկացած չէ տակաւին, բայց Տաճիկստանի այլ գաւառաց բազմաթիւ արտադրութիւնք կը գերադանցեն իրենց տնտեսի մէջ քան զտաճիկ զիւղացւոյն արգինքներ: Եւ թէ հայ գիւղացիք եղած են, խիստ քիչեր, որ նախաձեռնած են եւրոպական ինչ-ինչ երկրագործական գործեաց գործածութիւնն և իրենց հունձքեր մաքրելու համար բնութեան և եղանակին արտօնութիւններուն չնայել, որով հունձք շատ անգամ նշաւակ կըլլան եղանակին անյաջող պարագայներուն և փճման կալին մէջ:

Հայ արհեստաւորը ունի իւր խոնորին կամ գործարան, թէ և անշուք. նա իւր գործի ու գործարանի տէրն է, ինքն է որ կը ճարտարէ, կը մեքենայէ, ինքն կը ծախէ և իւր ճակտի քրտանց արդիւնքներ ինք կստանայ, ոչ որքէն կոխում ունի ուղղակի կերպով: Բայց այսօր ազգաւորութիւնն և բացարձակ չքաւորութիւն իւր ամեն մէկ կողմերում տիրած է, ինչպէս ուրիշ տեղեր իթուրքիս, նոյնպէս և գաւառիս հայոց վրայ: Հայ արհեստաւորն իւր անդուլ աշխատութեամբ ու ճարտարութեամբ, չոր

Հայ մը բրթելու շտի Հագիւ կրնայ օրապահիկ մը ճա
րել և այդ չքաւորութեան, շահուց անհամեմատ բացա
սականութեան մէջ կը խամբին այնքան թարմ հոնճար
ներ և կը ջլատին յաջողակ և փորձառու ձեռաց և մըտ
քի հնարքներ: Հայ երկրագործն, հանգերձ իւր պաւա
կաց, կնոջ աղջկանց շարքաւ աշխատութեամբը, իւր ար
տեր ծածկող առատ հունճքերու և արգիւնքներու մէջ,
շատ անգամ կը պակսի իրեն գարիի զատուան ալ և իւր
հետ իւր անասուններն ալ չեն կարող կուշտ տարբը Ի.
մի բան մեր արհեստաւորն ու մշակ ձեռակերտութենէ
և մշակութենէ յառաջ գալիք մեծութիւնն ու հարստու
թիւն չեն վայելեր, — ինչպէս կարելի էր որ հայն իւր
գիրք բարձրացունէր և բարեկեցիկ վիճակ մը ունենար
գէթ, քանի որ յաճախ իւր վաստակաց մէջ կը հոսին,
իւր քուսկի ու շտեմարանի մէջ կը քայլեն թուրք կառա
վարութեան ժանտաջուգիւ հասանքն, քանի որ մեր հայն
դատաւարտուած է Վանայիսի աղջկանց անվերջ աշխա
տութեան: Որքան տնտեսական բարգաւաճումը ազգե
րու գոյութեան և կենսական պայմաններու մէջ մեծ և
կարեւոր տեղ կը բռնէ, այնքան և ի թուրքիս հայոց նը
կատմամբ այդ վիճակ վտանգուած և նորա անկման և
ոչնչացման սպառնացող հարուածներ անխուսափելի ու
մահարեւր դարձած են: Ինչ որ այսօր մեր ժողովրդեան
գոյութեան կենսական պայմաններն կը կազմեն, ինչ որ
իւր ապրուստի անհրաժեշտութիւնն ու միջոցներն են,
— իւր արտ ու հող, անասունքը, ցանքը, հունճը, բնա
կութիւնքը, գոյքը, արհեստ, վաճառականութիւն, ամուս
նութիւն և . . . իւր զուտ ծնունդն ու մեռելը ծանրաբեռ
նուած են թիւն ու հալիւ անյայտ հարկերու և դանա
ղան տուրքերու տակ: Եթէ երբէր մեր ժողովրդեան ձե
ռակերտական և մշակական արտադրութիւնք թուարա
նական յառաջատուութեամբ կաճին, թուրքին՝ զհայս կո
ղուտելու, կեղեքելու մեքենայութիւնք և միջոցք ու խո
րամանկութիւնք երկրաշտփական յառաջատուութեամբ և
թերիս այլ աւելի, այնպէս ու հայն ինքզինքն գտած է
մի բարուած եղութեան մեքենայի, մի սարդոստայնի
մէջ, յորում շարունակ կը ձուլի, կը քամուի, կապառուի
իւր կենսականութիւնը, իւր ուժը, իւր վաստակ և ճակ
տի քրտանց արգիւնքներ:

Մեր ժողովրդեան այս արգահատ վիճակն աւելի մօ
տէն չլափած, քննած և զգացած ըլլալով գործնականա
պէս, հարկ է որ մտնեմք մեր ժողովրդեան խտերու, դա
տակարգերու մէջ, մտնեմք հայ գիւղերու և հայ ընտան
եաց մէջ, ուր մեր առջև ականիս պիտի փայլին ամէն
կեղերութիւն, անհասարկութիւնք, զրկումներ, բիւր
կաշկանդմունք, հարստահարական միջոցք, մի խօսքով բայ
քայեալ և կործանիչ վիճակ մը:

Ձանազան հարկեր ու տուրքեր:

Քլիսահարկը կամ գինւորական տուրքը մեր
ժողովուրդի տրոց մէջ զլիաւոր տեղն ունի: Տաճիկ տէ
րութիւնն զինուորագրութեան օրինաց համաձայն 21 տա
րին լրացնող ու իւրաքանչիւր 135 անհատ մէկ անձ գին
ուոր կառնէ: Զինուորական կեանքը երեք զլիաւոր չըլան

ունի, որ մինչև 35 - 40 տարին կը վերջանայ, այսինքն՝ 21
տարեկանէն զինուոր գրուոյն 5 տարի իբրեւ կանոնաւոր
զինուոր նոյն ծառայութեան մէջ մնալէ վերջ կը վերա
դառնայ իւր յարկի տակ և անցած կըլլայ բէտի ֆի
կարգին, որ դարձեալ երկրի խոտութեան պահուն ընդ
գինու զինուոր է, և այդ կարգն ալ անցունելէ վերջ
մոտ 30 տարեկան (պահապան զինուոր) կարգին
կանցնի, ապա 30 - 40 տարեկն վերջ ազատ է այլ ևս Եւ
որովհետեւ հպատակ զինուորագրութենէ զերձ են, առ
իւրաքանչիւր 135 անհատ մի անձի փոխարէն 50 ոսկի
կը վճարեն, որով առ անհատ 37 դր. կը վճարէ տարե
կան: Բայց, այդ իւրաքանչիւր 135 անհատն ո՛չ թէ տաճ
կաց պէս 21 տարին լրացնողներ են, այլ այդ թուոյն մէջ
հաշուած են օրորոցի կաթնակեր նորածին տղայից, ց' յետին
ծերն, խեղճ, կոյն, հաշմանդամն, ինչպէս նաև
գառաւուք, որ խառնիկս ինչպէս անկարողներն՝ ծերն
ու հաշմանդամ զերձ են զինուորագրութեան հարկէն:
Մինչդեռ տաճիկն կերթայ իւր երկրի ու տէրութեան
պարտքն հատարելու, ուր այն ստաւելութիւնն ևս կը
նշմարտի որ հասարակ զինուորի կարգէն իւր աստիճանն
ալ բարձրանալով, ըստ այնմ, կաւելցուի և իւր զինուո
րական թոշակն աստիճան աս աստիճան: Որով անոր
ծառայութիւնն կերպիւ իւր կը փոխարինուի, իսկ այլ
ևս չորձելու անկարող անցեալ զինուորն ու սպայն կամ
ստիճանաւորն ունին դարձեալ իրենց հանգստեան թո
շակն ար. կանխաւ տէրութիւնը տաճիկներէն առ 180 ան
հատ մէկ անձ զինուոր կառնէր և հպատակը 180 անձէն
մէկ հատի համար 50 ոսկի կը վճարէին, որով տաճիկ
մը ալ 50 ոսկույ վճարմամբ զինուորութենէ կրնար ազատ
մնալ, իսկ այժմ ինչպէս տեսնեմք այդ 50 ոսկույ գումա
րն 135 անհատի բամետուած, կամ որ նոյնն է 180 անհա
տի վճարել 70 ոսկի: Բայց այժմ տաճիկ մը զինուորու
թենէ ազատ մնալ ուզած անունն ոչ թէ 70 ոսկի կը վը
ճարէ, այլ դարձեալ 50 ոսկի և մնացեալ 20 ոսկույ փո
խարէն 3 ամիս զինուորական ծառայութեան մէջ պիտի
մանէ, զինուորագրութեան անհրաժեշտութիւնն ընդհան
րացնելու: Այսպէս կանխաւ 10 - 12 տարի առաջ՝ իւրա
քանչիւր անհատ 27 և կէս դր. կը վճարէր իբրեւ զինուո
րական տուրք և այժմ 37 դր., որով հետգհետէ կը բար
դուին և կաւելցուին տուրքերն, միևնոյն ժամանակ այդ
տրոց ենթարկելով օրորոցի մանուկէն ց' ծերն, խեղճ, հաշ
մանդամն, որք ի տաճիկս իսպառ ազատ են զինուորութե
նէ: Եւ սակայն այլ և այլ ժամանակ՝ այս անհատաւոր
ութեանց մասին պատրիարքարանի կողմէ եղած առար
կութեանց ի պատասխան, տաճիկ տէրութիւնն բարեփո
խութիւն մը ըրած ըլլալու յաւանքութեամբ, որոշած է
որ փոխանակ այն յիսուն ոսկույ գումարն հարիւր երե
սունէն հինգ անհատի հաւասարապէս բաժնուելու, անոնց
մէջէն դուրս մնան մանուկներն, ծերերն, հաշմանդամներն
և մնացելոց վրայ՝ աղքատ, միջակ ու հարուստ դասուն
համեմատական բաշխումն ըլլայ, նոյն գումարը, առանց
անկէ բան մը պակսեցնելու (հալը թէհամիւլ — համեմա
տական բաշխումն): Բայց և այնպէս ականիս յորում



թիւն մ'է որ ոչ միայն հարիւր երեսուն և հինգ անհատի մէջ գտնուին տասը—քսան հարուստներ, այլ և ամբողջ քաղաքիս մէջ աստուց բոլորը մատից վրայ կը համարուին։

Կալուած աշին տուրք։ Եթէ կալուածը բնակութիւն, տուն է, զնոյն հաղարին հինգ դրշ. իսկ եթէ արդիւնաբեր հող, ագարակ, արտ՝ տասն տու հարիւր հարկ մը կը վճարուի։ Այս հարկին ենթարկուած են նաեւ տաճիկ ժողովուրդն ալ։ Եւ սակայն այսօր հայ գիւղացւոց և թուրք մշակի այդ տրոց մէջ տարբերութիւն մը կայ։ այն պէս որ հայոց արտերն ու հողեր, տուն, բոլորն ալ իրենց իրական արժէքէն չա՛տ ու չա՛տ բարձր գներով նշանակուած են արքունական տոմարի մէջ և թուրքաց կալուածներն համեմատաբար նուազ գներով գնահատուած, որով հայոց այդ հարկեր ըստ ամենայնի չափազանցուած ու բազմապատկուած են և այսօր գիւղացիք կը տքնին հարկերու դիմեալ պատկառելի գումարներու տակ։ Հայ գիւղացին իւր պարտուց տակ ճնշուած, ստիպուած է արքունական տոմարի մէջ հինգ հաղար դրշ. նշանակեալ արտն հինգ հարիւր դրշ. ի ծախել, բայց և այնպէս գնողն կը սկսի և արդէն բնական էր այդ, քանի որ գնողն իսկ կը մտածէ որ տասն ասարայ մէջ տուած տուրքն իրական գնէն պիտի անցնի։ Երկրպէս և քաղաքիս մէջ ա Ր հ ե ս տ ա կ ա ն և վաճառականական տուրքերն (թէ մէթ թու վէթի ճարէթ) որ շահուց հինգ տու հարիւր են հակառակ առեւտրոց վերջին ծայր անձկութեանց, տարուէ տարի կաճին, կը բարդուին ժողովրդեան քամակի վրայ։ Իբրեւ կալուածաշին և վաճառականական տուրք վճարուած այսչափ գումարի իւրաքանչիւր դրշ. ի վրայ վերջնաւ երկու փարայի յաւելում մ' ևս եղած է իբրեւ հասարակաց կրթութեան և շինութեան տուրք (մէարըֆ, նաֆաա՛), դարձեալ տասանորդական տուրքն ևս որ կանխաւ տասն տու հարիւր էր, այժմ՝ տասն երկուք ու կէսի բարձրացած է և այդ աւելորդ առնուած երկուք ու կէսի մի մասն յատկացուած է երկրագործական սըն տուկի և հասարակաց շինութեան (զրաա՛թ, նաֆաա՛) և միւս մասն ալ դարձեալ հասարակաց կըրթութեան։ Տեսանք որ երկրագործութիւնն, ձեռագործութիւնը և վաճառականութիւնը գրեթէ հայոց ձեռքն են գաւառիս մէջ և այդ հասարակաց շինութեան, կրթութեան, երկրագործական անտուկի բոլոր հասոյթներուն երեք չորրորդն հայ ժողովրդեան տուրքերէն կը գոյացուին և մէկ չորրորդն ալ տաճիկը կը վճարեն։ Այդ հասոյթներովն է որ թէ քաղաքիս և թէ վիճակաց մէջ տաճիկաց մզկիթներն, դպրոցներն, մէսճիտներն, մէտրէսէներն (կրօնական վարժարաններն) կը կառուցուին հսկայակալ և հսկայաչէն, այդ հասոյթներովն կը կառավարուին ու կը մատակարարուին, առանց երբէք հայոց դպրոցներն օգտուելու ու նպաստուելու անկէ։ Իսկ երկրագործական անտուկէն, որ սա՛ն մանուած է գիւղացւոց վնց առ հարիւր տոկոսով ստակ վըճարել, դարձեալ հայ գիւղացիք չեն օգտուիր անկէ, զի այդ փոխառութիւնը ընելու մտադրած պահուն իսկ իւր առջեւ եղած կը տեսնէ բազմակողմանի դժուարութիւններ։ պէտք

է հաճեցունել—կաշառել—այդ անտուկի վերն եղած պաշտօնեայներն, մինչդեռ թուրք երկրագործներն նուազ զըժուարութեամբ և ընդհարմամբ կօգտուին իրենց հարկ եղած գումարներն ստանալով։ Մեր վերջ յիշած հասարակաց շինութեան տուրքերէն զատ, սաան երկու դրշ. առանհատ ժողովրդեան վրայ մի մասնաւոր տուրք ևս դրուած է մասնաւորապէս ճանապարհներու, կամուրջներու շինութեան համար, և դրը կը գանձէ նաֆաաի անտուկը (հասարակաց շինութիւն)։ Բայց և այնպէս մեր ժողովուրդ այդ տուրքերն ալ վճարելով հանգերձ, դարձեալ այդ շինութիւնը կը ծանրանան մեր ժողովրդեան և մանաւանդ գիւղացի գասուն վրայ, որք բռնադատուած են օրերով, ամիսներով, իրենց եղներով ու սայլերով չարաչար աշխատել, շինուածոց հարկ եղած քարերն, կիրն, փայտերն և այլ նախնական նիւթը մատակարարել, կտրելով լուսներէն ու անտառէն և բերել շինուածոց վայրը։ Քնական է որ այսպիսի շինութիւնը կսկսին գտնան և կը վերջանան աշան, այսինքն մշակի ամենակարեւոր և սուղ ժամանակն, իւր արտերն հերկելու, մշակելու, ցանելու, քաղելու, կալ ընելու օրերն, որով ըիջ չպատահիր որ անոց հողեր անտերունջ ու անմշակ մնան, կամ հունձքերն փճանան և բացասականութեան գատապարտուին, իսկ իրենք շինուածոց վայրերը, այդ բռնազրօսիկ և տաժանելի աշխատութեանց մէջ, անօթի ու անսուաղ, հիւանդանան, շնասուին, իրենց սիրելի եղներն սատկին ու այսպէս ամէն կողմի ձեռքն, թափ մնացած, իրենց ընտանիք ու զաւակուրք ևս մի կողմ լքուած, լողան թշուառութեանց մէջ։ Երբ շինուածքն կտարտի ու գիւղացիք այլ ևս գործ չունին, իրենց տեղերէն մեկնելէ առաջ, պէտք է նոյն շինուածոց հսկող պաշտօնեայէն մի ծանուցագիր ստանան, իրենց գործն աւարտած ըլլալնուն յապացոյց։ Հոս է որ վերջին դժուարութիւն մ' ալ կը ծագի, բռնաբարութիւնն իւր կատարելութեան հասած, նոյն պաշտօնեայն պէտք է գոհացնել մի ու է գումարով եթէ ոչ նա օրերով կը յետաձգէ ու կ'երկարէ։ Գիւղացին ժամավաճառ ըլլալ չուզելով երբ մեկնին, առանց այդ ծանուցագիր ստանալու, ահա ճամբուն միջոցին իրենց ետեւէն հասած է զափթիկէյ հրոսակ խումբ մը, որ գիւղացիներն գնահիտմամբ կառաջնորդեն քաղաք իրանտ, որպէս տէրութեան անհաւատարիմներ և գործելէ փախողներ, որով գիւղացիք այդ ապագայ խժոճութեանց ալ չենթարկուելու սարսափէն հարկադրեալ չատ անգամ իսկ ծախեն իրենց աշխատակից եղներն այդ ընչաքաղց պաշտօնէից ի գոհացումն։ Բայց խայտառակութեանց թատրն վերջացած չէ, երբ շինուածք աւարտի, ահա մի հանրագիր կը ներկայանայ գիւղացւոց, կուսակալի կողմէն, որպէս զի ստորագրուին զայն, որու մէջ ներքոդաբար խօսուած է թէ՛ ի՛նչ պէս գիւղացիք հաճ-հաւանութեամբ և ամենաշին յօ. ժարանօք, ինքն աբերաբար յանձն առած են այս կամ այն շէնքի, ճանապարհի, շինութեան հարկ եղած ծառայութիւններն ընել և անձնուիրաբար աշխատած ու գործը ի կատար հանած են. գիւղացիք կստորագրեն

զայդ իրենց արին . քրտինքով ու արցունքով . . . կը հասնի այդ թուզթ ի Պոլիս առ սուլթանն կամ ուր որ անկէ, և ահա միւս շարթուն տեղոյն կուտակալին, շինուածոց վերառեսչին, յանձնած ողովի անդամոց կը պատասխանուն թրքական չոպչիալ դրուատիքներով մէծիտէի պատուանը շաններով, պաշտօնի, թոշակի բարձրացմամբ և այս ա. մէնն ի վնաս և ի կործանումն երկրի ժողովրդեան և այն ալ երկրին գլխաւոր և մեծ ոյժն կաղմող երկրագործ դասուն, որոյ ետեւն կը մնան արցունք, խեղճութիւն, աղքատութիւն, տներ ու փճացումն

(կը շարունակվէ .)

ՆԱՄԱԿ ԹԻԻՐԻՍՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ .

Տիգրանակերտ, 20 մայիս 1891 .

Տեղիս տիրող ցեղը շատ կատգեր է, օր չի կայ որ սըր աճմիկի գէսընք չի յարուցուն. ձեծ, անարգանք, զղբ. կանք և գողութիւնք սովորական եղած են քաղաքիս մէջ .

Ի հռան դրան Ս վեգի փողոցի բաղնիքայ առջև ե. րեք թուրք ուղած են հայ հարսի մը պատիւը բռնի վի. բաւորել. Հարսը իւր քննապաշտպանութեամբ ինքը - զինք ձեռք չի տար, սակայն չնացող տաճիկները այնչափ կը քաշկռտեն որ հարսին լաթերը կտոր . կտոր կընեն. Հայ երիտասարդներն հարսին աղաղակը լսելով՝ օգնութեան կը հասնին և գաղաններուն ձեռքէն կաղաթեն մերկիկ. թէեւ կը բողբոխի, բայց, ինչպէս միշտ, ի զուր . . .

Յուսում դրան զօրգօրներ կոչուած տեղը երկու կանայք կը լլուին խուր մը աւազակներէ՝ որոց մի քա. նիսը կը ճանչնան և կառավարութեան կը յայտնեն. Կառավարութիւնը փոխանակ քննութեան առնելու և պատ. ժելու յանցաւորները, գանգատողները կը վռնտէ ըսելով "ատէպսիզներ զուր կընէք և թուրքին վրայ կը ձգէք" .

Կառավարութեան վատ պաշտօնեայններէն հրահանգ. ուած կարգ մը անպիտան թուրքեր Ասորոց առաջնոր. դարան կերթան և կոստին եպիսկոպոսը ծաղրել նա ալ չը զիմանալով անոնց վատ արարքներուն "զուրս ելէք" կըսէ. Վայ՛ եկաւ խեղճ առաջնորդին գլխուն . բոլորը մէկէն վրան կը թափուին, խիստ կը ծեծեն, գլխին և մօրութին մաղերը կը փետեն և վերարկուն ալ կտոր. կտոր ընելով չնչսպառ կը թողուն ու կը մեկնին. Քա. նի մը ժամ վերջը հազիւ խելքը գլուխը կուգայ և թագ. բիր մը գրել տալով՝ կուտակալին կը զրկէ դափասին միջոցաւ. Ոճրագործները կը բռնուին և կը բանտարկուին, սակայն գորաղաքար բանտերուն զուրը երկու է թուրք չարագործաց համար, մէկով բանտ կը մտնեն, իսկ միւսով՝ աղատ կարծախուրն իրօք ալ այնպէս ե. ղաւ . յիշեալ բանտարկեալները մէկ ժամ վերջ աղատ թողուցին .

Հայ բողբոխական մը Տիւշէքէնեան Սարգիս ա. զայի որդին Յովհաննէսը չուկային մէջ 8 . 10 տա. ճիկներէ կը ծեծուի խիստ կերպով. բայց ոչ ոք կը հա. մարձակի միջամտելու, որովհետեւ չարագործներն բացար.

ճակալէս կը պոռային տկանատեսներուն որ, "եթէ կըր. նաք՝ ձեռքէ առնել, եկէք որ տեսնէք ձեր գլխուն գալիքը" . Յիշեալին հայրը ոստիկանապետին կը դիմէ և եղելութիւ. նը կը սրատմէ և սակայն ոստիկանապետը անմիջապէս "թէփէլէին փիս գեալուրը" հրամանը կուտայ ոստի. կաններուն և ոստիկանը ալ հրելով հրմտելով զուրս կը վռնտեն հայրը՝ որ ճարահատեալ կը դիմէ անգլ . փոխ հիւպատոսին, բոլոր անցքերը մի առ մի կը պատմէ և պաշտպանութիւնը կը խնդրէ. Յիշեալ հիւպատոսն թով. մաս էջնետին, թէեւ անտարբեր, բայց չը զիմանալով՝ խեղճ Յովհաննէսի աղերսին, անձամբ վալիին կերթայ և կը պահանջէ չարագործաց բռնուիլը և պատժուիլը. Ասոր վրայ վալին կը հրամայէ որ չարագործները բանտարկուին. Տասնէն մի միայն չորս թուրք կը բանտարկուին և ա. նոնք ալ երեք ժամ վերջ աղատ կը թողուին .

Ահա՛ այնպէս է թուրք կառավարութեան արդարասի. բութիւնը, որմէ կարելի է չափել հայ ժողովրդեան վրայ ի զործ դրուած ճնշումներն ու հարստահարութիւնները, որու համար հայք ի զուր կը գանգատին, կարծելով թէ գոհացում պիտի գտնեն, առանց մտածելու թէ կառավա. րութիւնը ինքն է որ բացարձակապէս կը քաջալերէ իւր ընկերները՝ աւաղակները, ոճրագործներն ու չարա. գոծները .

Աւտո .

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻԻՐԻՍՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ .

— Խարբերոյ նահանգի Խուզումա գաւառի Բաղմա. չէն գիւղին մէջ հարկահաւաք ոստիկանը հայ մը իւր տուրքը վճարել չի կարողանալուն համար ձէթով կծեն և մերկ կը կապին արևի տակ, կէս օր թողելէ յետոյ՝ չի խղճալով ողորմելոյն սրտածմիկի աղաղակաց, կը բերեն ուռի (բէքմէղ) և այս անգամ ալ ուռիով օծելով վե. րըստին արեգական տակ կը թողուն, մարդուն մորթը կայ. րի կը կծկի հազարաւոր ճանճեր կը հաւաքուին և սոսկա. լի կերպով կը տանջեն զինքը, ուր ուրեմն ի մուտս արե. գական կարճակեն խեղճն իւր տունը, որ երկրորդ օրը կը մեռնի .

— Նոյն և ուրիշ գիւղերու մէջ տուրք վճարելու կարո. ղութիւն չունեցող աղգայնոց ձմեռուայ պաշարին վրայ կիյնան ստովալլուկ գաղանաց նման այդ անազորոյն զին. քորը, գոչելով "եթէ դրամ չունիք վճարելու, հապա այդ պաշարներն տուէք . արոց փոխարէն" . խեղճ գիւղացին կը մաքառի իւր պատառիկին համար, չուգել տալ զի. զայն տալը ստուգապէս զինքն և իւր ընտանիքը սովի մատնել պիտի լինէր ձմեռուայ երկաբատե եղանակին մէջ, բայց զինքորք քարէ սրտեր ունին՝ կը զարնեն, կը ծեծեն, կը վիրաւորեն և պաշարներն կը յափշտակեն այդ ողորմելոյն ձեռքէն .

Տրոց հաւաքումը զիւրացնելու համար նոր միջոց մը ալ գտած են հաւաքիչ ոստիկանը. Այն տներն որոց մէջ վերնատուն կայ, վերնատունն կը քանդեն և փայտերը

կը գրաւեն տրոյց փոխարէն, իսկ եթէ վերնատուն չունի, նոյն իսկ տանեաց գերաններն կը խլեն և տունն աւելի քան կը դարձնեն: Երևակայեցէք թէ այս հնարքով որչափ լուր արտաբերուի և աւանայ խաւար և կործանուի և ով արտաբերողը և անձուկ ժամանակին մէջ:

Այդպիսի աշխարհաշէն քաղաքականութուն . . .

— Արարիկի մէջ դուրսնախօս և նրբամիտ ազգային մը որ հանրաժանութիւն էր Տուաճի Էֆ. (աղօթող) մակ. անուամբ, զի միշտ բազմութեանց մէջ լսեցէք ևս ա. զօթք մը արտաբերուի զոր «ամէն» ըսէք: Ըսելով կըսէր քարոզածի մաղթանքներ, ինչպիսի թուրք կառավարութեան եթէ լաւ կառավարէ և ընդդէմ, եթէ վատ կառավարէ, Այսու հանդերձ այդ մարդը իւր սրբաբանութեանցը համար երևելի թրքաց քով ալ մուտք ունէր, որ երբեմն կը վշտանային իւր կծու ակնարկութիւններէն ընդդէմ կառավարութեան, բայց կը ներկէին իւր ծագածութեան խոսակցութեանը համար Ասկէ բաւական ժամանակ յառաջ, որ մը յիշեալ Տուաճի էֆէնտին կայցելէ Արարիկի զինուորական հրամանատար քօլ ազատիին, մինչ քօլ ազատին բացակայ էր, և սրտ սպասաւորն մի հասարակ զինուոր, որ լսած էր Տուաճիին սրբաբանութիւնը և վշտացած, կընդունէ զինքը և կըսէ «լաւ եկար, կեանքդ, շատոնց է որ ուխտած եմ զքեզ շան նման սպանելու» և հաստ բիրով մը կուսի անխնայ գանակոծել զձերտնի Տուաճին, կը վիրաւորէ զայն, և երբ ձեռքնին կուգէ փախչիլ, զինուորը ետեւէն կը հասնէ և կից մը տալով վիրաւորին կը թաւալէ գրան տալէ փոսի մը մէջ (Արարիկի բոլոր փողոցները ժայռու զառիվերերու զառիվերներն): Երբեմնայն ազգայիններէն մարդիկ կը հասնին, փոխ կուգայ, Տուաճին կը յայտնէ թէ ձեռք ուսած ու վիրաւորուած է: Յաջորդ օրը կը մեռնի, զիսկը Արարիկի առաջնորդարանը կը բերուի, առաջնորդը Եֆէնիկ կախկոպոս Ապահոսին թագրի կը գրէ, զինուորը կը ձերբակալուի, բայց կառավարութեան բժիշկը յետ քննութեան զիսկին, տեղեկագիր կուտայ թէ Տուաճին ձեռքէն չէ մեռած: Քաղաքին մէջ երկու քրիստոնեայ ըր ժիշկ կան, նորոք կը հաստատեն թէ ձեռքով մեռած է: Վիրաւորութիւնը կը մեծնայ կառավարութեան թուրք ըր ժիշկն և երկու քրիստոնեայ բժիշկաց մէջ (տրիշ բժիշկ չի կայ յԱրարիկի): Վերջապէս երկու քրիստոնեայ զիսկ զննութիւն կընեն և ուզեցը կը բանան մեռելալին և յայն ժամ յայտնի կը տեսնուի թէ ձեռք մեռած է, որոյ վրայ ճարահատակ թուրք բժիշկն ալ կը միանայ իւր քրիստոնեայ արաշտօնակցած և երբեք իմաստն տեղեկագիր կուտան կառավարութեան թէ Տուաճի իւր ստացած հարուածներէն վախճանած է. բայց ահա այդ միջոցին զինուորը կարծես հրաշխարհաւորն կը փախչի և ցարդ բռնուած և կամ տեղը իմացուած չէ:

Մ. Մ. . . ևս .

ՆԱԽԱԿՆԵՐ ԹԻԻՐԵԻԱՅԻՑ

Կ. Պօլիս, 25 յունիսի 1891.

Մեծ տաղնապ կը տիրէ նախարարաց մէջ թիւրք կառավարութեան հնացած ախար մահացուցիչ նշաններն հետզհետէ և աւելի ծանր կերպարանքով երևան կուգան, հակառակ իւր բոլոր ջանքերուն, որով ցոյց տալ կուգէ թէ ինքը շատ առողջ է և հանգիստ, բայց իզուր . . . Ժողովուրդը, նոյն իսկ մահամկտական ժողովուրդը իւր դժգոհութեան արտայայտութիւնքը կընէ յարմար առթիւ: Քանի մը օր յառաջ Պօլսոյ և Չէրքէզ-քէյի մէջ տեղ արտահան կառավարին միջադէպը բոլորովին չի փակուած Արարիկ կառավարին ստաց լուրեր կը հասնին որ Հուաճեայի մէջ (էմէն գաւառը) արարները լաւ պատրաստութեամբ մը թիւրք կառավարութեան գէմ ապստամբելով ինչպէս կառավարիչը, նոյնպէս երկու անգամ կուսելով շատ մը թուրք զօրքեր սպանած են: Յիշեալ արարք կը պահանջեն եղեր որ խալիֆայու թիւնը զոր խլած են սուլթանը, վերադարձուի իրենց: Խնդրը թէ և կրօնական կերպարանք ստացած է և սա կայն ակներեւ է որ արարք իրենց ինքնուրոյնութեան կը ձգտին և այդու Տաճկաստանի քաղաքական կացութիւնը չիոթելէ ալ շատ հեռու չեն: Կըսուի թէ Անգլիան զրգած է: Այս ոչ նուազ հետաքրքիր լրոյ մասին տեղական լրագիրք ոչինչ չի կարողացած գրել, բայց միայն հաղորդեցին թէ Արեւելի ճամբով երկու շաբաթաւոր զրկուեցան յիշեալ տեղը:

Այս օրեր պատահեցաւ հետեւեալ յիմար ձերբակալութիւնը:

Բնիկ թուրքիացի մի հայ վաճառական, որ հինգ տարիներէ ի վեր առեւտրական գործերով Պազարէջ հաստատուած է, Քէօսթէնէի տոնավաճառին համար ապրանք տանելու նպատակով տեղոյ կուգայ և ստախանութեան կողմանէ կը ձերբակալուի, իւր կոսկածելի անձ նաւորութիւն: Խեղճ մարդը անմիջապէս ստախանապի տին ներկայացուելով վերջոյս կողմանէ հարցաքննութեան կենթարկուի: Իդուր վաճառականը կը յայտարարէ քանից՝ թէ ինքը վաճառական է և եկած է ապրանք տանելու գիտաւորութեամբ: Ստախանապետը հաւանականաբար ենթադրելով թէ յաջողած է ձերբակալել փախտական յեղափոխականներէն մին, նորա բոլոր յայտարարութեանց իրեն միակ պատասխան, մի քանի անգամ կրկնել է հետեւեալ հեզնական խօսքերը, «չափկայ հը, թիւճաք հը» . . . : Հայ վաճառականը բանտարկուած է և ցարդ կը մնայ բանտ:

Նամակաւ գրուած է որ քիւրդերը Ախլաթ գաւառի Գիզուտ և Գատվան գիւղերի տաւարը թալանելով տարած են, ամեն մէկ զիւղէն 24 աւան եղներ, այն ալ ընտիրները: Այս լրոյ խեղաթիւրումն է թերևս որ տեսնուած հայ թերթերէն Արեւելք անշուշտ չի կարենալով ճշմարտութիւնը նոյնութեամբ գրել, սա կերպով կը հաղորդէ իւր ընթերցողաց, «Մայ կառավարիչը

նոյն քաղաքի տառաջնորդ Ներսէս վարդապետ Խարախան հանի ըրած զեկուցմանը վրայ, կը հեռագրէ Բաղիւոյ կուսակալին թէ քրդերը յարձակելով մի քանի հայ գիւղերու վրայ՝ հարկը հատ ոչխար թալանած են և կուսակալը անմիջապէս քննիչներ ուղարկելով թալանուած վայրերը կը հաստատէ (օ . օ) թէ հայերէն և ո՛չ մի ոչխար իսկ առնուած է և կը հրամայէ զիւղացւոց որ նոյնը հաստատող մի հանրագրութիւն ներկայացունեն իրեն և զիւղացիներն ալ կը պատրաստուին եղեր այդ գրութիւնը տալու ։ Ինչպէս կերի, տակաւին թուրք կառավարութիւնը համոզուած է յիմարարոր որ այդ տեսակ խեղդատակ ձեւակերպութիւններով կարող է ծածկել ճշմարտութիւնը, խեղդել ժողովրդեան ձայնը և ցոյց տալ Եւրոպային թէ իւր ժողովուրդ, նոյն իսկ հայ զիւղացին շատ զոհ է իւրմէ

Գիտակ .

— . —

Կ . Պօլիս, 30 յունիս, 1891 .

Սիւլվիի (Պօլսոյ մօտ) հայերը ննջեցեալ մշտարած սահերնուն խումբ մը տաճիկ սրիկայ երիտասարդներ բարձրաձայն հայհոյանքով կը նախատեն ննջեցեալը, քահանայն և տմբայլ կրօնական հանդէսը, "բօքմուշ լէշ կէթիւյօրլար" և այլն ըսելով որոյ վրայ սգաւոր ժողովուրդը կը զրգուի, սակայն չ'ուզելով խռովութիւն հանել, ի բացակայութեան փօղիսի, մօտէն անցնող քանոնի (զօրաց փօղիս) մը կը դիմեն և կառավարիկն որ իբրեւ ի պաշտօնէ անպարտուոր, այլ իբրեւ կառավարական անձնաւորութիւն պապանձեցնէ անպատկառ երիտասարդ ներքոյ Սակայն զինուորական պաշտօնեայն կարեւորութիւն չի տալով՝ կը հեռանայ, մինչ տաճիկներ կը շարունակեն առաջինէն աւելի նախատել և ուղարկել Հայ ժողովուրդը կը դայրանայ և կը յարձակի նոցա վրայ, և անպատճառ ծանր մի կ'ախ տեղի սլախ ունենայ եղեր, եթէ պատկառելի տաճիկ մը վրայ հասնելով չի յանդիմանէր լիբր երիտասարդները և այդ կերպով կ'ախին առաջը չառնէր :

Այս և ողորդինակ գէպքեր յաճախ կը պատահին վերջերս, նոյն իսկ Պօլսոյ սուլթանի գահուն չուրջ, որոնք կը ցուցնեն թէ տգէտ տաճիկ հասարակութիւնը զբը դուռած է, մանաւանդ այս պահուս, հայ ժողովրդեան դէմ, մղուելով գաղտնի գրգռումներէ, որ կը բորբոքեն ա նոր կրօնական մոլեռանդութիւնը և ազգային ստեղծութիւնը : Սակայն այս երևոյթ զարմանալի չէ, որովհետեւ տգէտ ամբողջն այլ կերպ չէ կարելի՛ սպասել Բայց հեռաբքերին այն է որ կառավարութիւնն նմանօրինակ գէպքերու առթիւ կ'ամ ինքն է որ կը զրգուէ և կը հրահրէ այդ ղգացումները և կ'ամ այլ ևս ոչ սովորական անփութութեամբ կը զիտէ և աչք կը գոցէ, որ նոյնպէս տեսակ մը զրգումն է :

Գեւրջտնի խարխըն գիւղի հասարակութիւնը ասկէ չորս տարի յառաջ չէր ուզէր այլ ևս տուրք վճարել իւր աշխատանքէն, թէ՛ կառավարութեան և թէ՛ քիւրտերուն : Վերջիններս բոնի տուրք կատանային յիշեալ գիւղացիներէն, ստորկելով թէ հոգերը ի

րենց կը պատկանին : Գիւղացիք նեղը մնալով և տեսնելով որ կառավարութիւնը իրենց զանգառներուն կարեւորութիւն չընծայիր, կ'ստիպուին թողնել իրենց տեղերը և զաղթել իրենց ծննդավայրէն : Սակայն կառավարութիւնը ժողովրդեան մեկնման պահուն զինու զօրութեամբ կարգիլէ այդ շարժումը և մի կերպ կը զաղարեցնէ քիւրդերուն տուրք վճարելը : Այժմ կը պատմուի թէ քիւրդերը անտեղի նեղութեանց մատնած են նոյն գիւղի հասարակութիւնը և կը պահանջեն որ բոլորովին քաշուին այն հողերէ, որոնք իբր թէ իրենց սեպհականութիւնն են : Գիւղացիք ստիպուած կը զիջեն ըստ առաջ նոյն տուրք վճարել բայց քրդերը ո՛չ մի պայման չեն ընդունիր և բացարձակապէս կը պահանջեն որ հեռանան գիւղէն : Այս անգամ կառավարութիւնը բոլորովին խլացած է և չուզիր զիւղացւոց զանգառներն լսել իսկ : Գիւղին բահանան եկած կը զեղերի պատրիարքաբան, իսկ գիւղացիք չեն զիտուր ինչ ընեն :

Ճամբորդը կը պատմեն թէ Ազադ գիւղի մէջ հայ բողոքական հասարակութեան պատկանող ութը անձինք, երկուքը այր, երեքը կին և երեքը զեռահաս աղջիկ, արտի մէջ աշխատած ժամանակին տան երկու զինեալ քիւրդեր վրայ հասնելով կը յաջողին յախտակել տանիւ աղջիկներէն երկուքը, իսկ մնացեալը վախելով կաշտին նոցա վայրադարձեցնէ և զիւղ կը հասնին օ յուր թեան կանչելու : Գիւղացիք իմանալով հառայ կուսանու բազմութեամբ կը յարձակին անօրէններուն ետեւէն : Երկար ժամանակ այս և այն կողմ փնտռելէ յետոյ վերջապէս բարայրի մը մէջ կը դանեն շարաբաղ զոհերուն շարաշար լիւսած գիտկները :

Գիտակ .

Կուսակցութեան Գանձարանում շնորհակալութեամբ տառաջիկ են հետեւեալ նախատուութիւնները . —

Ռուսաստան . — Բ . քաղաքից Հայկազն Զինակրի միջոցով ծերունի Արաքսից 35 բրլ . — Ազ . Ս . ից 10 բրլ . — Մ . Ս . մից 2 բրլ . , Զինորանից 62 բրլ . 30 կոպ . , Զ . սփ քաղաքից Ի . . . Ա . եանցի հանգանակած 40 բրլ . : Ամբիկայի . — Ն . Ե . քաղաքից 3 . Բ . — ից 2 զօլար , Գ . Ա . ից 2 զօլար . , Մ . 3 . ից 3 զօլար : Բուլղարիա . — Ֆայ . . քաղաքից Թագուշն 10 Ֆրանկ , — Ռումանիա Սուլ . ք . ից Մ . Պ . — ից 20 Ֆր . , Մ . Մ . Կ . — ից 20 Ֆր . , Գ . Կ . — ից 20 Ֆ . , Ս . Մ . ից 10 Ֆր . , Ա . Թ . ից — 5 Ֆր . , Ս . Ա . — ից 5 Ֆր . : Տաճ . Կ . Պ . քաղաքից Գրուից երկու հարկը երկու դրչ . , Շաղանակէն 1 օւնի . , ասկի :

Ա.Զ.Գ. Խնդրում ենք Հ ն չ ա կ ի ընթերցողներին ուշադրութիւն դարձնել այն կէտի վրայ, որ խմբագրութեան հասցէն այսուհետեւ Պ ա Ր ի Ղ է և ո՛չ Մ օ ն ա կ ի լ է , ինչպէս էր մինչև այժմ :

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ և զրամ ուղարկել հետեւեալ հասցէով .
Paris (France) . — M. Beniard. Poste restante .

Լօնդօն . Հայկական ազատ տարան .